Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի ապրիլի 28-ի N Օ1.1/80-2/7283-17, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մայիսի 10-ի N Օ6/3-8/15606-17 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի ապրիլի 28-ի N Ն.2/22.2/5332-17 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «AmeriCares» հիմնադրամի կողմից ԱՄՆ-ի «Հայաստան-Արցախ» հիմնադրամի միջոցով, որպես օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված բեռի (141 տեղ, 5,579.4 կգ ընդհանուր քաշով, 2,852,599.04 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5,740 ԱՄՆ-ի դոլար, «Արարտյան» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման (ցանկը կցվում է) ծրագիրը:

Սահմանել, որ կից բաշխման ցանկում նշված հազուատը՝ 33 տեղ, 45,994.05 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, համապատասխան մաքսային ձևակերպումներից հետո անհատույց հանձնվելու է Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղին:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ:

3. Սահմանել հիմնադրամի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ:




Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՐՑԱԽ» ՀԻՄՆԱԳՐԱՄԻ ՄԻՋՏՈՎ ՈՐԴԵՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՊՈԱԿ-ԿԱԾ ԲԵՌԻ ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆԿ

ՀԱԿ 076

Հ/Հ	Դիմոր	Նկարագրություն	Ստացող	Կոդ	Արժի	Քաշ (kg)	Արժեք (ԱՄՆ դոլար)
1.	Հայաստան - Արցախ հիմնադրամ (AmeriCares)	Դեղեր	Ալեքսյան Լ. - ՀՀ առողջապահության նախարարություն	SC 076-01	383	4,483	2,713,508.59
2.	Հայաստան - Արցախ հիմնադրամ (AmeriCares)	Դեղեր	Ալեքսյան Կ. - ՀՀ-ում ԼՂՀ ներկայացուցչություն	NKR SC 076-02	16	122	16,543.42
3.	Հայաստան - Արցախ հիմնադրամ (AmeriCares)	Դեղեր	Ղազարյան Ա. - «Արարտյան» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ	SC 076-03	22	546	4,739.42
4.	Հայաստան - Արցախ հիմնադրամ (AmeriCares)	Դեղեր	Մինասյան Ա. - «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն	SC 076-04	15	193	19,858.01
5.	Հայաստան - Արցախ հիմնադրամ (AmeriCares)	Բժշկական պարագաներ	Ալեքսյան Լ. - ՀՀ առողջապահության նախարարություն	SC 076-05	546	5,291	49,930.92
6.	Հայաստան - Արցախ հիմնադրամ (AmeriCares)	Բժշկական պարագաներ	Ալեքսյան Կ. - ՀՀ-ում ԼՂՀ ներկայացուցչություն	NKR SC 076-06	17	771	2,024.64
7.	Հայաստան - Արցախ հիմնադրամ (AmeriCares)	Հագուատ	Ղազարյան Բ. - ՀՕՑԻ	SC 076-07	33	895	45,994.05
					1,032	12,301	2,852,599.05



2. 6/3.1



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**12 մայիսի 2017 թվականի N Մ-417-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մայիսի 12-ի N 01.1/80-2/8233-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մայիսի 11-ի N 06/3-8/15816-17 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության Ֆրանսիայի մասնաճյուղի կողմից Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության հասցեով ուղարկված հազուստի (26 տեղ, 3,040 կգ ընդհանուր քաշով, 200,702.96 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 3,740 եվրո, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

Սահմանել, որ հազուստը հանձնվելու է «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» հասարակական կազմակերպությանը՝ սիրիահայ կարիքավոր ընտանիքներին անհատույց բաշխելու նպատակով:

2. Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչությանը՝ բերի համապատասխան ձևակերպումները և բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սիյուռքի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՆ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**12 մայիսի 2017 թվականի N Մ-418-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2012 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱ-
ԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մայիսի 11-ի N 01.1/80-2/8097-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մայիսի 11-ի N 06/3-8/15808-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված մարմարե մշակված արտադրանքը (4 տեղ, 20,864 կգ ընդհանուր քաշով, 119,076.58 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 3,329,200 դրամ, «Գուգարքի» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա, հուլիսի 24-ի N Մ-758-Ա, 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-111-Ա, հուլիսի 22-ի N Մ-671-Ա և դեկտեմբերի 23-ի N Մ-1224-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԵՎԱԿ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 մայիսի 2017 թվականի N Մ-419-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-018-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱ-
ԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2017 թվականի մայիսի 10-ի N 01.1/80-2/7985-17 և Հայաստանի Հանրապետության կառա-
վարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մայիսի 6-ի N 06/3-
8/15557-17 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված ներքո-
հիշյալ ապրանքները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի
«Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնո-
լոգիաների կենտրոններ» ծրագրի մասին» N Մ-018-Ա որոշմամբ հաստատված ծրագրի
շրջանակներում՝

1) գրասենյակային կահույք՝ 7 տեղ, 854 կգ ընդհանուր քաշով, 8,297.90 եվրոյին
համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 762,190 դրամ, «Արարատ-
յան» ՏՄ.

2) դյուրակիր համակարգիչներ՝ 2 հատ, 4.5 կգ ընդհանուր քաշով, 3,782.67 ԱՄՆ-ի
դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 60 ԱՄՆ-ի դոլար,
«Զվարթնոց» ՄՏ:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտեի կողմից:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**12 մայիսի 2017 թվականի N Մ-420-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**


*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2017 թվականի մայիսի 12-ի N 01.1/80-2/8218-17 և Հայաստանի Հանրապետության կառա-
վարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մայիսի 11-ի N 06/3-
8/15818-17 եզրակացությունները, որոշում է.*

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսու-թյունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականա-ցում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա, հուլիսի 24-ի N Մ-758-Ա, 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-111-Ա, հուլիսի 22-ի N Մ-671-Ա և դեկտեմբերի 23-ի N Մ-1224-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Վաելկոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02596346) 2017 թվականի ապրիլի 25-ին կնքված՝ N 17/04-01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շատրվանային համա-կարգի մոնտաժման աշխատանքների իրականացում՝ 3,093,857 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Նիկոլ Դոման» արտադրական կոոպերատիվի հետ (ՀՎՀՀ՝ 02208258) 2017 թվականի մայիսի 5-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է լուսավորության սյուների և լուսամփոփների մատակարարում՝ 2,400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-րարությունը և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-մուտների կոմիտեին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**12 մայիսի 2017 թվականի N Մ-421-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-018-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱ-
ԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մայիսի 12-ի N 01.1/80-2/8169-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մայիսի 6-ի N 06/3-8/15476-17 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ» ծրագրի մասին» N Մ-018-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) Լիբանանի Հանրապետության քաղաքացի Ահմադ Էլ Ղարբիի հետ (անձնագիր՝ RL 3588706) 2017 թվականի ապրիլի 10-ին կնքված՝ N 01-10.04.17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 1,190,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) Լիբանանի Հանրապետության քաղաքացի Միսակ Ավետիքյանի հետ (անձնագիր՝ RL 2523765) 2017 թվականի ապրիլի 18-ին կնքված՝ N 01-18.04.17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 700,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ԷՅԱ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02540157) 2017 թվականի ապրիլի 17-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է փայտաթելային սալերով շարժական դռների պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 368,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի:

ՆԱԽԱԳԱԶ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 մայիսի 2017 թվականի N Մ-422-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-018-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱ-
ԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ N 1
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մայիսի 15-ի N 01.1/80-2/8291-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մայիսի 11-ի N 06/3-8/15814-17 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ» ծրագրի մասին» N Մ-018-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) Իսպանիայի Թագավորության քաղաքացի Պաուլա Բահադյանի հետ (անձնագիր՝ PAE065660) 2017 թվականի ապրիլի 13-ին կնքված՝ N 01-13.04.17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 1,673,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) Արգենտինայի Հանրապետության քաղաքացի Անդրես Ռոսսիի հետ (անձնագիր՝ AAC811832) 2017 թվականի մայիսի 5-ին կնքված՝ N 01-05.05.17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման անհատույց ծառայությունների մատուցում՝ գնահատված 450,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 մայիսի 2017 թվականի N Մ-423-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ
31-Ի N Մ-244-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մայիսի 15-ի N 01.1/80-2/8290-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մայիսի 11-ի N 06/3-8/15819-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Սիմոնյան» կրթական հիմնադրամի 2017 թվականի մայիսի 5-ի գրությունը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի մարտի 31-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի N Մ-018-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» N Մ-244-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 2-րդ ենթակետում «3,490,000 դրամի չափով» բառերը փոխարինել «4,638,000 դրամի չափով» բառերով.

2) 3-րդ ենթակետում «1,315,000 դրամի չափով» բառերը փոխարինել «2,125,000 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԿԱՏԱՆ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
12 մայիսի 2017 թվականի N Մ- 424 -Ա
քաղ. երևան

**«ՖԻԼՀԱՐՄՈՆԻԱ» ՊՐՈԴՅՈՒԿԵՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՀԱՍՏԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ԳՅՈՒՄՐՈՒ ՍԵՎՅԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱԼԱՏ ՊԱՏՄԱՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ
ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մայիսի 4-ի N 01.1/80-2/7652-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի մայիսի 3-ի N 02/14/7156-17, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության 2017 թվականի մայիսի 5-ի N 01/14.1/2473-17, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մայիսի 3-ի N 06/3-8/14891-17, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի 2017 թվականի մայիսի 3-ի N 01/11.1/2438-17 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի 2017 թվականի մայիսի 2-ի N 01/3026-17 եզրակացությունները, որոշում է.


1. Բարեգործական որակել «Ֆիլիարմոնիա» պրոդյուսերական կենտրոն բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ 2,205,350,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Գյումրու Սկյանի մշակույթի պալատ պատմամշակութային հուշարձանի վերակառուցում» ծրագիրը (կցվում է):

2. «Ֆիլիարմոնիա» պրոդյուսերական կենտրոն բարեգործական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների վերաբերյալ, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկություններ :

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարան:



ՆԱԽ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ




6/11

«Գյումրու Սկյանի մշակույթի պալատ պատմամշակութային հուշարձանի վերակառուցում» ծրագիր

1. Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է վերակառուցել Գյումրիում 1988թ. երկրաշարժից մինչ այսօր կիսավեր Սկյանի մշակութային պալատ պատմամշակութային հուշարձանը, որը 19-րդ դարի կառույց է: Վերակառուցվելուց հետո այն վերագործարկվելու է որպես ֆիլհարմոնիայի համերգային դահլիճ, որը ևս ավերվել է 1988-ի երկրաշարժին: Կառույցը շարունակվելու է իր ավանդական մշակութային գործունեությունը՝ դառնալով մշակութային կենտրոն ՀՀ-ում, մասնավորապես՝ Գյումրիում:
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Անկախաբար է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3. Բարեգործները	Կարեն Կարապետյան ընտանիք (ՀՀ, քաղ. Երևան, Ա. Ավետիսյան փ.4, 22 բն.), Սամվել Կարապետյան (ՀՀ, Լոռի, Տաշիր, Լեւինի փ. 10), Ռուբեն Վարդանյան (Ռուսաստանի Դաշնություն)
4. Ծրագիրը կատարողը	«Ֆիլհարմոնիա» պրոդյուսերական կենտրոն բարեգործական հասարակական կազմակերպություն (ՀՀ, քաղ. Երևան, Արարատյան 10բ, 68/7 տուն, ՀՎՀՀ՝ 02242606):
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ, Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, բնագավառը՝ մշակութային:
6. Ծրագրի բյուջեն	2,205,350,000 դրամ
7. Բարեգործություն ստացողը	ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարան
8. Ծրագրի իրականացման տևողությունը	2017 թվականի հունիսի 1-ից 2022 թվականի հոկտեմբերի 31
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Նախագծանախահաշվային աշխատանքներ, այդ թվում՝ ինժեներա-երկրաբանական հետազոտություններ՝ 12,300,000 դրամ, իրականացվելու է 2017 թվականի հունիսի 1-ից 2017 թվականի հոկտեմբերի 31-ը: 2. Համաշինարարական աշխատանքներ՝ այդ թվում՝ կառույցի մաքրման և աղբահանման աշխատանքներ՝ 1,149,206,000 դրամ, իրականացվելու է 2018 թվականի ապրիլի 1-ից 2020 թվականի նոյեմբերի 30: 3. Ներքին հարդարման աշխատանքներ՝ 652,000,000 դրամ, իրականացվելու է 2021 թվականի ապրիլի 1-ից 2022 թվականի ապրիլի 1-ը: 4. Տարածքի բարեկարգում՝ 149,344,000 դրամ, իրականացվելու է 2022 թվականի ապրիլի 1-ից 2022 թվականի հոկտեմբերի 31: 5. Կահավորում այդ թվում՝ Ֆ. Մանուկյանի «Սատուցիների պարը» խճանկարի վերանորոգում, տեխնիկական վերագինում՝ 242,500,000 դրամ, իրականացվելու է 2022 թվականի ապրիլի 1-ից 2022 թվականի հոկտեմբերի 1-ը:

		2017 թվականի հունիսի 1-ից 2017 թվականի հոկտեմբերի 31-ը: 2. Համաշինարարական աշխատանքներ՝ այդ թվում՝ կառույցի մաքրման և աղբահանման աշխատանքներ՝ 1,149,206,000 դրամ, իրականացվելու է 2018 թվականի ապրիլի 1-ից 2020 թվականի նոյեմբերի 30: 3. Ներքին հարդարման աշխատանքներ՝ 652,000,000 դրամ, իրականացվելու է 2021 թվականի ապրիլի 1-ից 2022 թվականի ապրիլի 1-ը: 4. Տարածքի բարեկարգում՝ 149,344,000 դրամ, իրականացվելու է 2022 թվականի ապրիլի 1-ից 2022 թվականի հոկտեմբերի 31: 5. Կահավորում այդ թվում՝ Ֆ. Մանուկյանի «Սատուցիների պարը» խճանկարի վերանորոգում, տեխնիկական վերագինում՝ 242,500,000 դրամ, իրականացվելու է 2022 թվականի ապրիլի 1-ից 2022 թվականի հոկտեմբերի 1-ը:
10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը		1. Նախագծանախահաշվային աշխատանքներ, այդ թվում՝ ինժեներա-երկրաբանական հետազոտություններ՝ 12,300,000 դրամ, 2. Համաշինարարական աշխատանքներ՝ այդ թվում՝ կառույցի մաքրման և աղբահանման աշխատանքներ՝ 1,149,206,000՝ - աշխատանքների իրականացում՝ 370,000,000 դրամ, - շինարարական նյութերի ձեռքբերում՝ 779,206,000 դրամ: 3. Ներքին հարդարում՝ 652,000,000 դրամ - աշխատանքների իրականացում՝ 208,640,000 դրամ - շինարարական նյութերի ձեռքբերում՝ 443,360,000 դրամ: 4. Տարածքի բարեկարգում՝ 149,344,000 - աշխատանքների իրականացում՝ 52,270,000 դրամ, - շինարարական նյութերի ձեռքբերում՝ 97,074,000 դրամ: 5. Կահավորում՝ 242,500,000 դրամ - Գույք՝ 97,000,000 դրամ - Խճանկարի վերանորոգում՝ 48,500,000 դրամ - ձայնային սարքավորումների և տեխնիկայի ներմուծում արտասահմանից՝ 97,000,000 դրամ:
11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը		Ծրագրի իրականացման համար կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:
12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ		ՀՀ կառավարություն, ՀՀ մշակույթի նախարարություն և Գյումրու քաղաքապետարան:

13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից՝ սահմանված կարգով:
--	--





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 մայիսի 2017 թվականի N Մ - 425 - Ա

(Որոշումն ընդունվել է 2017 թվականի մայիսի 12-ի նիստին)

քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ
19-Ի N Մ-086-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ
ՄԱՍԻՆ N 11 («ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ»
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մայիսի 15-ի N 01.1/80-2/8351-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մայիսի 11-ի N 06/3-8/15980-17 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ավրորա» միջազգային մարդասիրական մրցանակի շնորհում» ծրագրի մասին» N Մ-086-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02510673) 2017 թվականի մայիսի 6-ին կնքված N 1588-060517 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Ավրորա» միջազգային մարդասիրական մրցանակի շրջանակներում Լա Բոհեմ բալետի ներկայացման տոմսերի տրամադրում՝ 1,371,661 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱԸ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ


Ո Ր Ո Շ ՈՒ Մ
12 մայիսի 2017 թվականի N Մ- 426 - Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի N Մ- 246 - Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Գլոբալ Էյդ Նեթվորք»)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի ապրիլի 28-ի N 01.1/80-2/7284-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի ապրիլի 25-ի N 06/3-8/13819-17 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունից՝ GAIN միությունից, «Գլոբալ Էյդ Նեթվորք» ոչ առևտրային ՍՊԸ հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (762 տեղ, 16,223 կգ ընդհանուր քաշով, 118,085.68 եվրոի համարժեք դրամ արժողությամբ, իսկ փոխադրման և այլ ծախսերը կազմում են 4,110 եվրոի համարժեք դրամ, Գուգարքի ՏՄ, ցանկը կցվում է) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 14-ի «Գլոբալ Էյդ Նեթվորք» գրանցված միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Գէլ-ը Հայաստանին» ծրագրի մասին» N Մ-246-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, Հայաստանի Հանրապետության Լոռու, Արարատի և Արագածոտնի մարզպետներին:




Handwritten signature

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«GAIN-Germany»-ի կողմից «Գլոբալ Էյդ Նեթվորք (Գէլ)» ոչ առևտրային ՍՊԸ հայաստանյան մասնաճյուղի հասցեով ուղարկված բեռների նախնական բաշխման
ՑԱՆԿ

N	Կազմակերպության անվանում	Ապրանքների անվանում	Քանակ	Արժեք
1	Արցախի Հանրապետության Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Արցախի թեմ	Օգտագործված հագուստ	72 արմի	3777.000
		Նոր հագուստ կանացի և տղամարդու ավիաթեր	42 հատ	520.000
		Նոր հագուստ տղամարդու սպորտային ավիաթեր	15 հատ	199.000
		Նոր հագուստ կանացի երկաթաթև մոյլաներ	38 հատ	275.000
		Նոր հագուստ կանացի տրիկոներ	10 հատ	140.000
		Նոր հագուստ անեմպիան կարճաթև մոյլաներ	10 հատ	16.000
		Վաշիկ սպորտային երկաթաճիթք	38 գույց	950.000
		Չեղակ կաշվից	400 գույց	10000.000
		Օգտագործված հագուստ	44 հատ	5280.000
		Նոր հագուստ կանացի և տղամարդու ավիաթեր	50 արմի	2623.000
2	Արագածոտնի մարզի ազգիալական անապանով անկիթ (25 բնօտանիթ)	Նոր հագուստ կանացի և տղամարդու ավիաթեր	30 հատ	372.000
		Նոր հագուստ տղամարդու սպորտային ավիաթեր	15 հատ	199.000
		Նոր հագուստ կանացի երկաթաթև մոյլաներ	20 հատ	145.000
		Նոր հագուստ կանացի տրիկոներ	10 հատ	140.000
		Վաշիկ սպորտային երկաթաճիթք	200 գույց	5000.000
		Օգտագործված հագուստ	44 հատ	5280.000
		Նոր հագուստ կանացի և տղամարդու ավիաթեր	30 արմի	1574.000
		Նոր հագուստ տղամարդու սպորտային ավիաթեր	15 հատ	199.000
		Նոր հագուստ կանացի երկաթաթև մոյլաներ	20 հատ	145.000
		Նոր հագուստ կանացի տրիկոներ	10 հատ	140.000
3	Լոռու մարզի Ք.Սպիտակի Քաղաքացիական Ֆեդերալ շրջ	Օգտագործված հագուստ	150 գույց	3750.000
		Չեղակ կաշվից	12 հատ	1440.000
4	Արարատի մարզի Արարատ քաղաքի N3 միջնակարգ դպրոց	Հաստակի սալիկներ	70 ս/ք	3417.000
		Հաստակի սալիկներ	50 ս/ք	2441.000



6/12.19

6	Սոցիալապես անապահով անձիք «Գլոբալ Էյդ Լեթվորք (ԳԷԼ)» ոչ առևտրային ՍՊԸ հայաստանյան մասնաճյուղ	Եվրո պատուհան շրջանակներով	5 հատ	500.00
		Եվրո դռներ	15 հատ	1500.00
		Հատակի սալիկներ	64 մ/ք	3124.00
		Պատի կերամիկական սալիկներ	75 մ/ք	3315.00
		Օգտագործված հագուստ	220 արկղ	11490.68
		Նոր հագուստ կանացի և տղամարդու սվիտերեր	155 հատ	1922.00
		Նոր հագուստ տղամարդու սպորտային սվիտերեր	45 հատ	600.00
		Նոր հագուստ կանացի երկարաթև մայկաներ	60 հատ	435.00
		Նոր հագուստ կանացի տրիկոներ	20 հատ	280.00
		Նոր հագուստ մանկական կարճաթև մայկաներ	10 հատ	16.00
		Կոշիկ սպորտային երկարաձիթք	30 գույգ	750.00
		Կոշիկ սպորտային	1352 գույգ	33800.00
		Լվացքի մեքենա Electrolux	1 հատ	50.00
		Ներքնակ օգտագործված սպունգով	10 հատ	100.00
		Հեծանիվ օգտագործված	4 հատ	100.00
		Աթոռ փայտյա օգտ.	70 հատ	1050.00
		Գնդակ կաշվից	44 հատ	5280.00
		Խաղալիք փայտից	12 հատ	750.00
		Ուսումնական պարագաներ, պիտույքներ	190 կգ	180.00
		7	«Գլոբալ Էյդ Լեթվորք (ԳԷԼ)» ոչ առևտրային ՍՊԸ հայաստանյան մասնաճյուղ	Հատակի սալիկներ
Պատի կերամիկական սալիկներ	62 մ/ք			2741.00

118085.68

«Գլոբալ Էյդ Լեթվորք (ԳԷԼ)» ոչ առևտրային ՍՊԸ

Հայաստանյան մասնաճյուղի տնօրեն

Ռաֆայել Ֆիլիպպ Ֆրեկ



«20» ապրիլ 2017 թ.

9/12.19



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
12 մայիսի 2017 թվականի N Մ - 427 - Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒԼԻՍԻ 31-Ի N Մ-833-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՐ ՈՒ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**

(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 21-ի N01.1/80-2/4956-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի ապրիլի 28-ի N 06/3-8/14523-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հուլիսի 31-ի «Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից 2015-2018 թվականներին իրականացվող մարզամշակութային կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» N Մ-833-Ա որոշման մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «965,163,450» թվերը փոխարինել «1,067,013,450» թվերով.


2) կից ծրագրի 6-րդ կետը կարդալ նոր խմբագրությամբ « Ծրագրի բյուջեն կազմում է 1,067,013,450/ մեկ միլիարդ վաթսուևյոթ միլիոն տասներեք հազար չորս հարյուր հիսուն/ ՀՀ դրամ».

3) կից ծրագրի 9-րդ կետի նախավերջին պարբերությունը կարդալ նոր խմբագրությամբ՝ «Սանտեխնիկան և ցեռուցման, օդափոխության և ներածման համակարգերի մոնտաժային, էլեկտրամոնտաժային, հատակների և ներքին հարդարման, երեսապատման և սալվածքների, հակահրդեհային պաշտպանության, շանթարգելման միջոցառումների, բարեկարգման, արտաքին պատերի հղկման և լաքապատման, գազաֆիկացման, արտաքին էլեկտրամոնտաժային և կահավորման աշխատանքների իրականացում - 318,897,750/ երեք հարյուր տասնութ միլիոն ութ հարյուր ինսուևյոթ հազար յոթ հարյուր հիսուն/ ՀՀ դրամ»:

2. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է վերոնշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կարեն-93» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01500165) 2017 թվականի փետրվարի 1-ին կնքված՝ N 016/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Գյումրիում կառուցվող մարզամշակութային կենտրոնի լրացուցիչ շինարարական աշխատանքների կատարում՝ 32,209,630 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
12 մայիսի 2017 թվականի N Մ - 428 - Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N Մ- 1469 -Ա ՈՐՈՇՄԱՆԸ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**


(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի ապրիլի -ի N-17 և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի ապրիլի -ի N 06/3-8/-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 13-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից 2016-2021 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-1469-Ա որոշմանը կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

- 1) որոշմանը կից ծրագրի 10-րդ կետի 9-րդ ենթակետում և 11-րդ կետի 14-րդ ենթակետում «Ջուր» բառը փոխարինել «Վեոլիա Ջուր» բառերով.
- 2) որոշմանը կից ծրագրի 10-րդ կետի 10-րդ ենթակետում և 11-րդ կետի 15-րդ ենթակետում «հեռախոսավարձ» բառը փոխարինել «Արմենտել «ՓԲԸ » բառերով.
- 3) որոշմանը կից ծրագրի 10-րդ կետից հանել 6-րդ ենթակետը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**16 մայիսի 2017 թվականի N Մ-429-Ա
քաղ. երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈՒԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ
Մ Ա Ս Ի Ն**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2017 թվականի մայիսի 11-ի համաձայնեցման թերթը, որոշում է.

1. Բարեգործական որակելի Ֆուտբոլի ասոցիացիաների միջազգային ֆեդերացիայի (FIFA) կողմից, որպես օժանդակություն, «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով ուղարկված՝ ստորև նշված ապրանքների ներմուծման ծրագիրը՝

1) մարզահագուստ և մարզագույք՝ «Բաց գվարճալի ֆուտբոլային դպրոցներ» միջոցառումների անցկացման համար (26 տեղ, 242 կգ ընդհանուր քաշով, 3,592.10 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ).

2) մարզահագուստ, մարզակոշիկ և մարզագույք՝ ֆուտբոլի կանանց ազգային հավաքականի համար (65 տեղ, 496 կգ ընդհանուր քաշով, 18,312 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ):

2. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական ձեռնարկների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**16 մայիսի 2017 թվականի N Մ-430-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱ-
ՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2017 թվականի մայիսի 12-ի համաձայնեցման թերթը, որոշում է.

1. Բարեգործական որակելի Վրաստանի Հանրապետության աշխատանքի, առողջապահության և սոցիալական պաշտպանության նախարարության կողմից, որպես օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված 3,000 տուփ «Սովալդի 400 մգ N 28» դեղի (32 տեղ, 304 կգ ընդհանուր քաշով, 128,476,520.80 լարիին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 40,000 դրամ, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**19 մայիսի 2017 թվականի N Մ- 431 - Ա
(Որոշումն ընդունվել է 2017 թվականի մայիսի 12-ի նիստին)
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ
27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ
ՄԱՍԻՆ N 2 (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մայիսի 12-ի N 01.1/80-2/8173-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մայիսի 11-ի N 06/3-8/15820-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա որոշմամբ (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա, 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-035-Ա և մայիսի 20-ի N Մ-410-Ա, 2017 թվականի մարտի 23-ի N Մ-217-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Դելտապրո» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00113358) 2017 թվականի մայիսի 3-ին կնքված N Infra/Constr 10-2017 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դեբետի համայնքում «Սմարթ» կենտրոնի համալիրի շինարարական աշխատանքների իրականացում՝ 224,430,300 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ